10.57192/18291864-2024.2-276

Արմեն Յ. Մարուքյան
Պատմ. գիտ. դոկտոր

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՅԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

2020 թ. 44–օրյա պատերազմից հետո*

Բանալի բառեր – Արցախի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետություն, Ադրբեջան, պատերազմ, ագրեսիա, շրջափակում (բլոկադա), հայաթափում, ռազմաքաղաքական ղեկավարություն, պատանդառություն:

Մուտք

2020 թ. 44–օրյա պատերազմը ծանր հետևանքներ ունեցավ Արցախի և Հայաստանի հանրապետությունների համար: Մարդկային ու տարածքային լուրջ կորուստներից բացի, էապես մեծացան անվտանգային սպառնալիքներն ու մարտահրավերները հայկական երկու հանրապետությունների բնակչության համար: Ինչպես և սպասելի էր, Ադրբեջանը չբավարարվեց 2020 թ. պատերազմի արդյունքներով, որոնք իրենց արտահայտությունը գտան նոյեմբերի 9–ի եռակողմ հայտարարության տեքստում[1]՝ փորձելով ամեն կերպ զարգացնել Թուրքիայի անմիջական ներգրավվածությամբ ու համակողմանի աջակցությամբ ձեռք բերված հաջողությունները: Հայկական հանրապետությունների նկատմամբ Ադրբեջանի քաղաքականության ագրեսիվությունը ոչ միայն չնվազեց, այլև ստացավ նոր դրսևորումներ՝ վերածվելով բազմակողմ հիբրիդային պատերազմի:

Ուստի, 2020 թ. պատերազմից հետո հայկական հանրապետությունների նկատմամբ Ադրբեջանի վարած հանցավոր քաղաքականությանն իրավաքաղաքական գնահատական տալուց առաջ, անհրաժեշտ է ուսում–

*Հոդվածն ընդունվել է տպագրության 12.06.2024:

[1] Տե՛ս Заявление президента Азербайджана, премьер-министра Армении и президента России 10 ноября 2020 года, http://kremlin.ru/events/president/news/64384

նասիրել դրա նախապատրաստումը, իրագործման փուլերը, դրսևորումները, նախապես ծրագրված լինելու հանգամանքը՝ դրա հաջորդ թիրախները հստակեցնելու, ինչպես նաև հակազդման մեխանիզմներ մշակելու համար:

1. Ադրբեջանի հանցավոր քաղաքականությունը 2020 թվականից հետո

Արցախի և Հայաստանի հանրապետությունների նկատմամբ 2020 թվականից հետո Ադրբեջանի քաղաքականության դրսևորումները պայմանականորեն կարելի է դասակարգել 6 խմբի՝ ա) ռազմական հարձակումներ, բ) հոգեբանական ահաբեկում, գ) ապրուստի միջոցներից զրկում դ) ազատ տեղաշարժի սահմանափակումներ, ե) էներգետիկ համակարգի խաթարում զ) պարենային անվտանգության սպառնալիքների ստեղծում:

ա) Ռազմական հարձակումներ

2020 թ. պատերազմից և հրադադարի հաստատումից հետո ինչպես Արցախից, այնպես էլ Հայաստանի սահմանամերձ շրջաններից մարդիկ հեռանում էին իրենց բնակավայրերի նկատմամբ Ադրբեջանի՝ չդադարող հրետակոծությունների պատճառով: Ասվածը վերաբերում է ինչպես Արցախի Խրամորթ գյուղին, այնպես էլ ՀՀ Սոթք բնակավայրին, որի տների մեծ մասը վնասվել էր 2022 թ. սեպտեմբերի 13-14-ի հրետակոծություններից հետո: Սոթքի բնակիչների որոշ մասը մինչև օրս էլ չի վերադառնում վերանորոգված տները: Ադրբեջանական զինուժի հրետակոծությունները ծանր հոգեբանական ազդեցություն ունեցան նաև Հայաստանի առողջարանային Ջերմուկ քաղաքի բնակիչների վրա, որոնք չէին պատկերացնում, որ սահմանից 12 կմ հեռավորության վրա գտնվող իրենց բնակավայրը հարձակման կենթարկվի: Գեղարքունիքի մարզի Կութ բնակավայրը նույնպես հայտնվեց ադրբեջանական զինուժի թիրախում: Հատկանշական է, որ Կութի հրետակոծությունները կատարվում էին Քարվաճառի այն դիրքերից, որոնք 2020 թ. նոյեմբերի 9-ի հրադադարի մասին փաստաթղթով հանձնվել էին Ադրբեջանի վերահսկողության տակ: Այս հանգամանքն Ադրբեջանի կողմից հայկական տարածքների աստիճանական զավթումների չափազանց կարևոր արձանագրում է:

Հայաստանի սահմանամերձ շրջաններում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) գործունեությունը նույնպես վկայում է, որ դրանք

գտնվում են Ադրբեջանի շարունակական հարձակումների սպառնալիքի տակ: Սահմանամերձ մի շարք բնակավայրերում կառուցվել են պատնեշներ, որոնք հրետակոծման դեպքում խաղաղ բնակչության համար որպես պաշտպանիչ միջոց կարող են ծառայել: Բացի այդ, 2020 թ. մարտից Տավուշի մարզում կառուցվել են շուրջ 130 ապաստարաններ[2]:

բ) Հոգեբանական ահաբեկում

2022 թ. փետրվար–մարտ ամիսներին ադրբեջանցիները Խրամորթ գյուղի բնակիչներին բարձրախոսներով հայտարարում էին, որ իրենք գտնվում են Ադրբեջանի տարածքում և ուժի կիրառման սպառնալով պահանջում էին հեռանալ: Բնակիչներին ահաբեկելու նպատակով բարձրախոսների կիրառումն արձանագրվել է նաև Արցախի Մարտունու շրջանի Կարմիր Շուկա և Թաղավարդ, ինչպես նաև և Ասկերանի շրջանի Խնապատ, Նախիջևանիկ և Փարուխ գյուղերում[3]:

Սահմանամերձ բնակավայրերն ահաբեկման մեջ պահելու մեկ այլ միջոց էր անօդաչու թռչող սարքերի կիրառումը: 2020 թ. պատերազմից հետո Կութ գյուղում պարբերաբար նկատվել են ադրբեջանական անօդաչու թռչող սարքեր, իսկ 2022 թ. սեպտեմբերի 13–ի հարձակումից առաջ այդ սարքերի միջոցով կատարված նկարահանումների տվյալներն օգտագործվել են հրետանային ճշգրիտ հարվածներ հասցնելու համար, այդ թվում՝ ոչ ռազմական օբյեկտներին:

Հաճախակի էին դարձել նաև մարդկանց առևանգման դեպքերը: Որոշ դեպքերում հայ բնակիչներն անզգուշաբար են հայտնվել Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում, սակայն գրանցվել են նաև դեպքեր, երբ ադրբեջանական ուժերը, ներխուժելով հայկական վերահսկողության տակ գտնվող տարածքներ, սպառնացել կամ առևանգել են հայ խաղաղ բնակիչներին:

գ) Ապրուստի միջոցներից զրկում

Հայաստանի և Արցախի սահմանամերձ տարածքների բնակիչների ապրուստի միջոցները թիրախավորելը, մասնավորապես՝ գյուղատնտե-

---

[2] Տե՛ս **Amatuni Z.,** International Committee of the Red Cross, UNHR Interview in Yerevan, March 21, 2023.

[3] Տե՛ս Human Rights Defender of the Republic of Artsakh. 2023. “Interim Report on Violations of the Rights of Artsakh People by Azerbaijan in February - March.” artsakhombuds.am. https://artsakhombuds.am/en/document/910

սական աշխատանքները խոչընդոտելը, խոշոր և մանր եղջերավոր անասուններին առևանգելը սովորական էին դարձել ադրբեջանական զինված ուժերի համար: Այդ հարձակումների և ահաբեկումների հետևանքով գյուղացիները դադարում էին հող մշակել, ինչի հետևանքով կրճատվում էին ցանքատարածքները, մարդիկ վախենում էին իրենց անասուններին տանել արոտավայրեր, քանզի դրանց առևանգման բազմաթիվ դեպքեր էին գրանցվել:

Դեռ մինչև շրջափակումն արձանագրվել էին Արցախի սահմանամերձ որոշ բնակավայրերի հողատարածքների, տեխնիկայի և բնակելի թաղամասերի թիրախավորման դեպքեր, այդ թվում՝ խոշոր տրամաչափի զինատեսակներով, ինչը հանգեցրել էր գյուղատնտեսական աշխատանքների դադարեցմանը: Արցախի Մարդու իրավունքների պաշտպանի՝ 2022 թ. մարտին հրապարակված զեկույցում արձանագրվեց, որ ռուս խաղաղապահներն ի վիճակի չեն ապահովել գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվող քաղաքացիական անձանց անվտանգությունը[4]:

Վարչական և քաղաքացիական օբյեկտների թիրախավորման, գյուղատնտեսական աշխատանքների խաթարման, անասունների սպանության կամ առևանգման նույն մարտավարությունն ադրբեջանցիները կիրառում էին նաև Հայաստանի Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի սահմանամերձ գյուղերում՝ սպառնալով խաղաղ բնակչության անվտանգությանը և վերջիններիս զրկելով ապրուստի միջոցներից: Ջերմուկի ուղղությամբ ադրբեջանական զինուժի հարձակումից հետո և անգամ վնասված ճոպանուղու հիմանորոգումից երկու ամիս անց էլ զբոսաշրջիկներ գրեթե չէին գնում:

2022 թ. դեկտեմբերի 12-ին Բերձորի (Լաչինի) միջանցքի շրջափակումը Արցախի բնակչության ապրուստի միջոցների խաթարման հիմնական պատճառ դարձավ: Երկրի արտադրությունը կրճատվեց ավելի քան 85 %-ով, իսկ արտահանումը՝ 100 %-ով, մասնավոր հատվածի աշխատուժը՝ ավելի քան 60 %-ով, ուստի շուրջ 11000 մարդ կորցրեց աշխատանքը կամ եկամտի աղբյուրները[5]:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս Human Rights Defender of the Republic of Artsakh. «Report on the Violations of Individual and Collective Human Rights as a Result of Azerbaijan's Blockade of Artsakh (Nagorno-Karabakh) (100 Days).» Artsakh Ombudsman,2023., https://artsakhombuds.am/en/document/1028

դ) Ազատ տեղաշարժի սահմանափակումները

Բերձորի միջանցքի արգելափակումը ոչ միայն համատարած ձևով խախտեց Արցախի բնակիչների սոցիալ-տնտեսական իրավունքները, այլև լուրջ սպառնալիքներ ստեղծեց նրանց կյանքի իրավունքի համար: Թեև Ադրբեջանի նախագահը ժխտում էր այսպես կոչված «բնապահպանների» կողմից Լաչինի միջանցքի արգելափակման՝ ադրբեջանական իշխանությունների առնչությունը, սակայն միևնույն ժամանակ արդարացնում էր այդ գործողությունը, իր կարծիքով՝ Արցախից բնական պաշարների, ապօրինի արտահանումը կասեցնելու հիմնավորմամբ:

Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի փակման հետևանքով սննդի, առաջին անհրաժեշտության ապրանքների և դեղորայքի սակավությունը հանգեցրեց Արցախի բնակչության առողջության իրավունքի խաթարմանը: ԿԽՄԿ-ն միջազգային հանրությանը պարբերաբար զգուշացնում էր խոցելի խմբերի, հատկապես՝ երեխաների, հղի կանանց, հաշմանդամների և տարեցների առողջության համար վտանգավոր հետևանքների մասին[6]:

2022 թ. օգոստոսին Արցախի դեմ Ադրբեջանի սանձազերծած հերթական ագրեսիայից, դրա հետևանքով Բերձոր, Աղավնո և Սուս բնակավայրերի հանձնումից ու Լաչինի միջանցքով երթուղին հարկադրաբար փոխելուց հետո, նույն թվականի դեկտեմբերին այսպես կոչված «բնապահպանների» կողմից Հայաստանի հետ Արցախը կապող «կյանքի ճանապարհի» շրջափակումը, Հակարիի կամրջի վրա անցակետի տեղադրումը հստակ վկայում էին, որ այդ քայլերը ծրագրված և հետևողականորեն իրականացվող հանցավոր քաղաքականության օղակներն էին, որոնք վերջնարդյունքում պետք է հասցնեին Արցախի հայաթափմանը:

ե) Էներգետիկ համակարգի խաթարումը

2022 թ. ընթացքում Ադրբեջանը որոշակի քայլեր կատարեց Արցախի էներգետիկ համակարգը խաթարելու ուղղությամբ: Նախ 2022 թ. մարտին Ադրբեջանի կողմից վերահսկվող, Շուշիի տարածքով անցնող գազատարի պայթեցման հետևանքով դադարեցվեց գազի մատակարարումը Ար-

[6] Տե՛ս Human Rights Ombudsman of the Republic of Artsakh. “Report on the Violations of Individual and Collective Human Rights as a Result of Azerbaijan's Blockade of Artsakh, p. 12.

ցախ[7]: Այնուհետև Լաչինի միջանցքի շրջափակումից մեկ ամիս անց վնասվեց Հայաստանից Արցախ էլեկտրաէներգիա մատակարարող միակ մալուխը[8]: Արցախի էլեկտրաէներգիայի խաթարումն էապես վատթարացրեց բնակիչների կյանքի որակը: Ջեռուցման բացակայության պատճառով փակվեցին կրթական հաստատությունները, համացանցի և կապի միջոցների պարբերական խաթարումը խորացրեց արտաքին աշխարհից Արցախի մեկուսացումը:

զ) Պարենային անվտանգության սպառնալիքների ստեղծումը

Շրջափակումից հետո ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը Արցախում սննդամթերքի պակասի ապացույցները բավարար համարեց և սահմանեց, որ հումանիտար մատակարարումների, ներառյալ՝ սննդի հասանելիության սահմանափակումը՝ արձանագրելով, որ «մարդկանց առողջության և կյանքի համար կարող է լուրջ վնասակար հետևանքներ ունենալ»[9]:

Սննդի սակավության ու սովահարության վտանգներն ավելի էին բարդացնում Արցախի առողջապահական վիճակը: Արցախում սկսեցին գրանցվել թերսնման և սովամահության դեպքեր: Միջազգային քրեական դատարանի (այսուհետ՝ ՄՔԴ) նախկին գլխավոր դատախազ Լ.Մ. Օկամպոյի հրապարակած զեկույցում Արցախում սննդամթերքի և առաջին անհրաժեշտության իրերի մատակարարման սահմանափակումը որակվում էր որպես «ցեղասպանություն՝ սովահարության մատնելու միջոցով»[10]:

Միջազգային ճնշումների պայմաններում Ադրբեջանը, Բերձորի միջանցքը բացելու փոխարեն, առաջ քաշեց Ակնայի (Աղդամի) միջանցք բացելու այլընտրանքային տարբերակը: Աղդամի ճանապարհի գործարկումը խնդրահարույց էր նրանով, որ այդ երթուղին ամբողջությամբ անցնում էր

[7] Տե՛ս Human Rights Defender of the Republic of Artsakh. Interim Report on Violations of the Rights of Artsakh People by Azerbaijan in February - March, p. 11-12.

[8] Տե՛ս **Avetisyan A.,** Weaponizing Energy: Nagorno-Karabakh's Energy Supplies Under Siege. EVN Report, 2023, https://evnreport.com/spotlight-karabakh/weaponizing-energy-nagorno-karabakhs-energy-supplies-under-siege/.

[9] Տե՛ս International Court of Justice, "Summary of the Order of 22 February 2023", https://www.icj-cij.org/node/202558

[10] Տե՛ս Former International Criminal Court prosecutor, Luis Moreno Ocampo, issued report stating the blockade of Nagorno-Karabakh is «Genocide». Center for Truth and Justice, 2023, https://www.cftjustice.org/former-international-criminal-court-prosecutor-luis-moreno-ocampo-issued-report-stating-the-blockade-of-nagorno-karabakh-is-genocide/

Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող տարածքով, իսկ Արցախ մտնելու կետն արտաքին դիտորդների կողմից բացարձակապես անվերահսկելի էր:

Միջազգային քրեական իրավունքի տեսակետից՝ 2020 թ. պատերազմից հետո Արցախի բնակչության նկատմամբ Ադրբեջանի կողմից իրականացված հանցավոր գործողությունները համապատասխանում են ցեղասպանության հանցագործության հատկանիշներին: «Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի» գործի շրջանակներում ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանն անուղղակիորեն հաստատեց, որ Ադրբեջանի գործողություններում նկատվում են ցեղասպանության հանցագործության էական բաղադրատարրերը: Դատարանի նախնական եզրակացություններում հստակ նշվում է, որ Լաչինի միջանցքի արգելափակումը Լեռնային Ղարաբաղում ապրող հայերի էթնիկ խմբի առողջության և կյանքի համար իրական և անմիջական սպառնալիք է ստեղծել[11]: Ըստ էության, ՄԱԿ-ի դատարանի որոշմամբ արձանագրվեց, որ Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի շրջափակումով արցախահայերը զրկվեցին դեղորայքի, սննդամթերքի և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների հասանելիությունից, ինչը համապատասխանում է Ցեղասպանության կոնվենցիայի II հոդվածի «գ» կետի բովանդակությանը, այն է՝ Արցախում բնակվող հայկական էթնիկ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը[12]:

44-օրյա պատերազմից հետո արցախահայության դեմ Ադրբեջանի հանցավոր քաղաքականության դրսևորումները հիշեցնում են Օսմանյան կայսրության իշխանությունների կողմից Սիրիայի և Միջագետքի անապատներում հայ գաղթականների համար այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք անհամատեղելի էին նրանց կենսագործունեությանը և անխուսափելիորեն հանգեցվելու էին մահվան: Բաքվի հանցավոր վարչակազմի կողմից արցախահայերի նկատմամբ նույնաբովանդակ գործողությունների կատարումը վկայում է այն մասին, որ Ադրբեջանը ոչ միայն ամբողջությամբ յուրացրել, այլև ժամանակի պահանջներին համահունչ՝ կատարելագործել է ավագ եղբոր՝ Թուրքիայի ցեղասպանական քաղաքականության գործիքակազմը:

---

[11] Application of the International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination (Armenia v. Azerbaijan) (Order on Provisional Measures) February 22, 2023, paras 62, 67.

[12] Տե՛ս Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (adopted December 9, 1948) 78 UNTS 277 (Genocide Convention) art II(c).

2. Ադրբեջանի 2023 թ. սեպտեմբերի 19-ի ռազմական ագրեսիան և Արցախի հայաթափումը

Ինքնին հասկանալի էր, որ Ադրբեջանը չէր բավարարվելու կատարված հանցագործություններով և փորձելու էր այսպես կոչված «վերահինտեգրման» անվան տակ ավարտին հասցնել արցախահայերին հպատակեցնելու, իսկ հակառակ պարագայում՝ բռնագաղթեցնելու միջոցով Արցախը հայաթափելու և այդպիսով նրան տիրանալու հանցավոր ծրագիրը: Ուստի Ակնայի ճանապարհով մարդասիրական օգնությամբ առաջին և վերջին բեռնատարի Արցախ մտնելուց մեկ շաբաթ անց Ադրբեջանը նախաձեռնեց հերթական ռազմական ագրեսիան:

Արցախի դեմ հերթական ռազմական ագրեսիան նախաձեռնելուց առաջ ադրբեջանական կողմը կատարեց համապատասխան տեղեկատվական նախապատրաստություն: Բաքուն հաղորդագրություն տարածեց, որ Արցախի Հանրապետության տարածքում՝ ռուսական խաղաղապահ զորակազմի պատասխանատվության գոտում սկսում է այսպես կոչված «հակաահաբեկչական գործողություն», ինչի մասին տեղեկացրեց վերջինիս հրամանատարությանը, ինչպես նաև Ակնայում գործող՝ռուս-թուրքական մոնիտորինգային կենտրոնին:

Դրանից հետո 2023 թ. սեպտեմբերի 19-ին Արցախի Հանրապետության դեմ սկսվեց հերթական լայնամասշտաբ ռազմական ագրեսիան: Հարձակումն սկսվեց շփման գծի ողջ երկայնքով՝ հրթիռա-հրետակոծությամբ, ապա գործածվեցին անօդաչու թռչող սարքեր: Հրետակոծվում էր ոչ միայն մայրաքաղաք Ստեփանակերտը, այլև մյուս քաղաքներն ու գյուղերը: Ադրբեջանական կողմը տարբեր բնակավայրերում թիրախավորում էր կապի ամբողջական համակարգը: Բացի ռազմական օբյեկտներից, հրետանու, անօդաչու թռչող սարքերի և որոշակի հրթիռային համակարգերի միջոցով թիրախավորվում էին նաև քաղաքացիական օբյեկտները:

Արցախի պաշտպանության բանակը ծանր մարտեր էր մղում ճակատի տարբեր ուղղություններում, իսկ մի շարք հատվածներում ինտենսիվ կրակով կասեցվեց ադրբեջանական բանակի ճեղքումը դեպի հայկական բնակավայրեր: Չնայած Արցախի պաշտպանության բանակի անձնուրաց և հերոսական դիմադրությանը՝ ակնհայտ էր, որ ուժերի և ռեսուրսների ծայրահեղ անհամաչափության պայմաններում մարտական գործողությունների հետագա շարունակությունն անխուսափելիորեն հանգեցնելու էր խաղաղ բնակչության շրջանում մարդկային կորուստների: Այդ գիտակցումից ելնելով և որևէ տեղից (առաջին հերթին Հայաստանի Հանրապետությու-

նից) օգնության կամ օժանդակության ակնկալիքներ չունենալու պայմաններում՝ հարկադրված որոշում կայացվեց ռուս խաղաղապահների միջնորդությամբ Ադրբեջանի հետ հրադադար հաստատել և բանակցություններ սկսել դրա պայմանների շուրջ:

Չնայած Արցախի պաշտպանության բանակի անձնուրաց և հերոսական դիմադրությանը, ծայրահեղ անհամաչափ ուժերի պայմաններում հակառակորդին հասցված կորուստներին՝ 192 զոհ և 511 վիրավոր[13], ակնհայտ էր, որ ռազմական գործողությունների հետագա շարունակությունն քաղաքացիական բնակչության շրջանում անխուսափելիորեն հանգեցնելու էր մեծաթիվ զոհերի: Օգտվելով մարդկային և տեխնիկական ռեսուրսների բազմապատիկ առավելությունից՝ հակառակորդին հաջողվել էր հսկողության տակ առնել Արցախի միջհամայնքային ճանապարհները՝ կտրելով որոշ բնակավայրերի հաղորդակցությունը միմյանց և մայրաքաղաք Ստեփանակերտի միջև: Որոշ բնակավայրեր, այդ թվում՝ Մարտունի և Մարտակերտ քաղաքները, հայտնվել էին շրջափակման մեջ, ինչի հետևանքով բնակչությունը կանգնել էր ջարդերի ածող վտանգի առաջ[14]:

Ցեղասպանության վերահաս վտանգի պայմաններում Արցախի իշխանությունները, ռուս խաղաղապահների միջնորդությամբ, ադրբեջանական կողմի հետ հարկադրաբար գնացին հրադադարի բանակցությունների: Սեպտեմբերի 21-ին Արցախի ու Ադրբեջանի ներկայացուցիչների միջև Եվլախում կայացած առաջին հանդիպման ընթացքում, ռազմական գործողությունների դադարեցմանը զուգահեռ, Բաքուն առաջ քաշեց Ադրբեջանի սահմանադրության և օրենքների շրջանակում Ղարաբաղի հայերի «վերաինտեգրացիայի» պահանջը՝ պայմանավորվածություն ձեռք բերելով մոտ ժամանակներում անցկացնել հերթական հանդիպումը[15]: Ըստ էության, արցախյան կողմին ժամանակ էր տրվել՝ ընդունելու ադրբեջանական վերջնագրի պայմանները, հակառակ դեպքում ռազամական գործողությունները կարող էին վերսկսվել:

Եվլախի հանդիպումից չորս օր անց, արցախցիների զանգվածային բռնագաղթի գործընթացին զուգահեռ՝սեպտեմբերի 25-ին, նոր հանդիպում տեղի ունեցավ Իվանյան համայնքում տեղակայված ռուս խաղաղա-

[13] Ադրբեջանը հրապարակել է սեպտեմբերի 19-ի հարձակման հետևանքով զոհերի թիվը, https://www.tert.am/am/news/2023/09/27/azerbaijan/4008682

[14] **Բեգլարյան Ա.,** Ադրբեջանը վերահսկողության տակ է վերցրել նաև Արցախի որոշ համայնքներ, https://arm.sputniknews.ru/20230920/adrbejany-verahskvoghutjan-tak-e-vercrel-naev-arcakhi-vorvosh-hamajnqner-beglarjan-66148610.html

[15] Բանակցություններ Եվլախում. ինչ պայմանավորվածություններ են ձեռք բերվել՝ ըստ ադրբեջանական կողմի, https://hetq.am/hy/article/160361

պահների հրամանատարական շտաբում: Այս հանդիպման ընթացքում ադրբեջանական կողմը փաստացի բացահայտել է «վերաինտեգրման» գործընթացի իր պատկերացումները և, որպես այդ ճանապարհին առաջին քայլեր՝ պահանջել լուծարել Արցախի պետական ինստիտուտները, ինչպես նաև ռուս խաղաղապահների միջոցով հանձնել Արցախի պաշտպանության բանակի ամբողջ զինտեխնիկան և զենք-զինամթերքը: Ադրբեջանական կողմն այս պահանջները դիտարկում էր իբրև նախապայման, որպեսզի «վերաինտեգրվել» չցանկացող արցախցիներին թույլ տրվի Հակարիի կամրջի վրա տեղադրված անցակետով հեռանալ Հայաստանի Հանրապետության տարածք: Ստեղծված պայմաններում արցախահայությունն, անգամ հայրենի օջախները լքելու գնով, կտրականապես հրաժարվեց ընդունել «վերաինտեգրվելու» Բաքվի վերջնագիրը:

Սեպտեմբերի 19-20-ին տեղի ունեցած մարտական գործողությունների ընթացքում և դրանցից հետո հայերի նկատմամբ իրականացվող էթնիկ զտումներն ուղեկցվեցին քաղաքացիական բնակչության, այդ թվում՝ երեխաների սպանություններով, զոհերի նկատմամբ ուղեկցվող դաժան վերաբերմունքով, կանանց նկատմամբ կատարված բռնություններով, առևանգումներով, գերեվարումներով, տասնյակ հազարավոր հայերի՝ իրենց բնակավայրերից բռնի տեղահանությամբ: Հոկտեմբերի 3-ի տվյալներով՝ Արցախի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործած բռնագաղթածների թիվը կազմում էր 100 617 մարդ[16]:

Անդրադառնալով ուժի կամ դրա սպառնալիքի կիրառման պայմաններում Արցախից հայ բնակչությանը բռնագաղթեցնելու Ադրբեջանի քաղաքականության միջազգային իրավական գնահատականին՝ հարկ է նշել, որ Միջազգային քրեական դատարանի (այսուհետ՝ ՄՔԴ) Հռոմի ստատուտի 7-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, առանց միջազգային իրավունքով թույլատրված հիմքերի բնակչության տեղահանումը կամ բռնի տեղափոխումը որակվում է որպես մարդկայնության դեմ հանցագործություն: ՄՔԴ-ը պարզաբանել է, որ նախնական բնակության վայրից մարդկանց ֆիզիկապես տեղահանելուց բացի, ուժի սպառնալիքի կիրառումը, ինչը կարող է արտահայտվել բռնության հնարավոր գործադրման կամ կալանավորման վախի տարածման, ինչպես նաև հոգեբանական ճնշում-

[16] Քանի քաղաքացի է ԼՂ-ից մտել Հայաստան՝ վերջին տվյալներով, https://hraparak.am/post/861cf8e364f9ab1950b2221ab59142f3

ների այլ ձևերով, նույնպես բավարար են այդ գործողությունները մարդ-կության դեմ հանցագործություն որակվելու համար[17]:

Այսպիսով, միջազգային իրավունքի նորմերի տեսակետից, ողջամիտ հիմքեր կան՝ պնդելու, որ Արցախի դեմ 2023 թ. սեպտեմբերի 19-ին ձեռ-նարկված ռազմական հարձակումը ՄԱԿ-ի 1948 թ. Ցեղասպանության մա-սին կոնվենցիայի II հոդվածի «բ» և «գ» կետերի համաձայն՝ կարող է ո-րակվել որպես ցեղասպանություն, իսկ դրանից հետո իրագործված էթնիկ զտման կամ բռնի տեղահանության գործողությունը համապատասխա-նում է Հռոմի ստատուտի 7-րդ հոդվածի «դ» կետի դրույթներին և որակ-վում է որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն:

Միջազգային դատական ատյանների նախազգուշացումներից հետո էլ Ադրբեջանի նախագահը գիտակցաբար շարունակում էր արգելափակ-ված պահել Լաչինի միջանցքը՝ Արցախում խորացնելով հումանիտար ա-ղետն ու ցեղասպանության վտանգները: Պատճառաբանումներն առ այն, որ դա իբր կատարվել է բնական պաշարների մաքսանենգությունը կամ Արցախ զենքի և ականների տեղափոխումը կանխելու նպատակով՝ որևէ կերպ չեն կարող արդարացնել հումանիտար աղետի ստեղծման միջոցով Արցախում ցեղասպանության իրագործումը: Ավելին՝ 2023 թ. ապրիլի 23-ին Ադրբեջանը Հակարիի կամրջի վրա անցակետ տեղադրեց՝ վերահաս-տատելով միջազգային այդ ծանր հանցագործության մեջ իր պատասխա-նատվությունը: Ցինիզմի և միջազգային արդարադատության ծաղրի դրսևորում պետք է համարել Ադրբեջանի նախագահի այն հայտարարութ-յունը, թե Հակարիի կամրջի անցակետն իբր տեղադրվել է ի կատարումն ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի որոշման:

Ամփոփելով նշենք, որ Արցախի դեմ Ադրբեջանի ձեռնարկած 2023 թ. սեպտեմբերյան ագրեսիային հաջորդած՝ արցախահայության բռնա-գաղթեցման գործընթացը միանգամայն կարելի է դիտարկել որպես Մեծ եղեռնի ընթացքում երիտթուրքերի կողմից Արևմտյան Հայաստանից և Օս-մանյան կայսրության հայաբնակ այլ տարածքներից հայ բնակչության բռնի տեղահանության փաստի գրեթե նույնական վերարտադրություն, ինչի հետևանքով հայ ժողովուրդը ենթարկվեց հայրենազրկման: Այսպի-սով, 2020 թ. պատերազմից հետո Արցախի և նրա բնակչության նկատ-մամբ Ադրբեջանի հանցավոր քաղաքականության դրսևորումները ոչ այլ ինչ են, քան Ադրբեջանի կողմից Հայոց ցեղասպանության վերաբերյալ թուրքերի տված դասի ստեղծագործական յուրացում:

---

[17] Տե՛ս International Criminal Court (ICC), Elements of Crimes, Footnote 12, 2013, The Hague, https://www.icc-cpi.int/sites/default/files/Publications/Elements-of-Crimes.pdf

3. Ադրբեջանի կողմից Արցախի ռազմաքաղաքական ղեկավարների ապօրինի առևանգման ու ձերբակալության գնահատականն ըստ միջազգային իրավունքի

Արցախի դեմ շուրջ 10 ամսվա շրջափակումից հետո 2023 թ. սեպտեմբերի 19-ին ձեռնարկված հերթական ռազմական ագրեսիային ու արցախահայության զանգվածային բռնագաղթին զուգընթաց՝ Ադրբեջանի նախագահի հրահանգով Արցախի ռազմաքաղաքական նախկին և գործող ղեկավարներն առևանգվեցին և տեղափոխվեցին Բաքվի բանտ: Սա, ըստ էության, Ադրբեջանի յուրատեսակ ուղերձն էր «վերահինտեգրման» վերջնագիրը մերժած Արցախի բնակիչներին, որ եթե որոշեն վերադառնալ՝ իրենց հետ էլ նույնը կարող է պատահել[18]:

Բաքվի վարչակարգն իր ապօրինի գործողությունները փորձում էր արդարացնել այն «հիմնավորմամբ», թե ադրբեջանական ներքին օրենսդրությամբ Արցախի ղեկավարները համարվում են հանցագործներ և ահաբեկիչներ: Այս թեզը, սակայն, լուրջ քննադատության չի դիմանում, քանզի ադրբեջանական բանտում գտնվող Արցախի ղեկավարներին միջազգային հանրությունն ընդունել է որպես ինքնորոշված Արցախի Հանրապետության ժողովրդի օրինական ներկայացուցիչների, որոնք հանդիպումներ են ունեցել տարբեր երկրների օրենսդիրների հետ, անմիջական մասնակցություն են ունեցել հակամարտության խաղաղ կարգավորման բանակցային գործընթացներում՝ հանդիպումներ ունենալով նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների ներկայացուցիչների հետ: Անգամ 2020 թ. 44-օրյա պատերազմից և նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության ստորագրումից հետո էլ, տարածքային կորուստներով հանդերձ, Արցախի Հանրապետությունը շարունակել էր Ադրբեջանի վերահսկողությունից դուրս մնալ և պետական իշխանության մարմինները շարունակել էին գործել:

2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 3-րդ, 6-րդ, 7-րդ հոդվածներում փաստացի շեշտվում է Լեռնային Ղարաբաղի՝ որպես Ադրբեջանից անկախ միավորի գոյությունը, ինչի հետ համաձայնվել է Ադրբեջանից նախագահը՝ ստորագրություն դնելով դրա տակ[19]: Այս հան-

[18] Տե՛ս **Ocampo L. M.,** Current genocides and the consistent international practice to deny them. Summary of the case of Nagorno-Karabakh, REPORT-USP-Innovation-on-Global-Order.-Nagorno-Karabakh-case%20(1).pdf

[19] Տե՛ս Заявление президента Азербайджана, премьер-министра Армении и президента России 10 ноября 2020 года, http://kremlin.ru/events/president/news/64384

գամանքներից ելնելով՝ ադրբեջանական իշխանությունների կողմից Արցախի նախկին և ներկա ռազմաքաղաքական ղեկավարության ապօրինի ձերբակալումն ու Բաքվի բանտում պահելն իրավական տեսակետից պետք է գնահատվի ոչ թե Ադրբեջանի ներպետական օրենսդրության, այլ միջազգային իրավունքի համատեքստում:

Միջազգային իրավունքի տեսակետից՝ Բաքվի բանտում պահվող Արցախի ռազմաքաղաքական նախկին և ներկա ղեկավարները գտնվում են պատանդի կարգավիճակում, և նրանց նկատմամբ միանգամայն կիրառելի են 1979 թ. դեկտեմբերի 17-ի ՄԱԿ-ի «Պատանդառության դեմ միջազգային կոնվենցիայի» դրույթները, որի անդամ են հանդիսանում ինչպես Ադրբեջանը, այնպես էլ՝ Հայաստանը*:

ՄԱԿ-ի կոնվենցիայում պատանդառությունը սահմանվում է որպես ոչ միայն որևէ անձի կողմից մեկ այլ անձի (այսուհետ՝ «պատանդի») առևանգում և կալանավորում, այլև պատանդին մարմնական վնասվածք հասցնելու կամ նրան կալանավորված պահելու սպառնալիքով երրորդ կողմին՝ պետությանը, միջազգային միջկառավարական կազմակերպությանը, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց պարտադրելով կատարել որոշ գործողություն կամ ձեռնպահ մնալ որոշ գործողություն կատարելուց, ինչը դիտարկվում է որպես պատանդին ազատ արձակելու ուղղակի կամ անուղղակի պայման (հոդված 1, կետ 1)[20]: Արցախի նախկին և գործող ղեկավարների ապօրինի առևանգման և կալանավորման պարագայում պատանդառուի դերում հանդես է գալիս Ադրբեջանի նախագահը, ով տվյալ գործողությունների միջոցով ակնհայտ քաղաքական նպատակներ է հետապնդում:

Ադրբեջանի նախագահի հետապնդած քաղաքական նպատակները հասկանալու համար կարևոր է հստակեցնել, թե ինչ հանգամանքներում իրականացվեց Արցախի ղեկավարների պատանդառությունը: Ապօրինի այդ ձերբակալությունները կատարվել են Եվլախում և Իվանյանում՝ ռազմական գործողությունների դադարեցման մասին ձեռք բերված պայմանավորվածություններից և Արցախի բնակչության կողմից Ադրբեջանի առաջարկած այսպես կոչված վերաինտեգրման առաջարկի փաստացի մեր-

---

* 1979 թ. դեկտեմբերի 17-ի ՄԱԿ-ի «Պատանդառության դեմ միջազգային կոնվենցիային» Ադրբեջանը միացել է 2000 թ. փետրվարի 29-ին, իսկ Հայաստանը՝ 2004 թ. մարտի 16-ին: Երկու երկրներն էլ կոնվենցիան վավերացրել են առանց վերապահումների, ինչը նշանակում է, որ նրանց նկատմամբ կոնվենցիան գործում է ամբողջությամբ:

[20] Տե՛ս International Convention against the taking hostages. Adopted by the General Assembly of the United Nations on 17 December 1979, United Nations – Treaty Series, 1983, N 21931, p. 207.

ժումից հետո: Այս հանգամանքներից ելնելով՝ կարելի է պնդել, որ ապօրինաբար ձերբակալված Արցախի ղեկավարները ոչ թե ռազմագերիներ կամ հարկադրաբար պահվող անձինք են, այլ քաղաքական պատանդներ:

Ռուսաստանաբնակ ձեռնարկատեր և բարերար Ռ. Վարդանյանի Արցախում հայտնվելը և հետագայում պետնախարար նշանակվելը չափազանց նյարդայնացրել էր Ադրբեջանի նախագահին, ով հայտարարել էր, որ պատրաստ է երկխոսել Ղարաբաղի ներկայացուցիչների, բայց ոչ՝ այնտեղ հատուկ նպատակով եկած Ռուբեն Վարդանյանի հետ[21]: Արցախի շրջափակումից հետո ադրբեջանական կողմը Բերձորի (Լաչինի) միջանցքն ապաշրջափակելու համար պայման էր առաջադրում ոչ միայն Դրմբոնի ու Կաշենի հանքերն իր վերահսկողության տակ փոխանցումը, այլև Վարդանյանին պաշտոնից ազատումն ու Արցախից հեռացումը: Ուստի, միանգամայն սպասելի էր, որ պաշտոնից ազատված, բայց Արցախում մնացած Վարդանյանը պետք է հայտնվեր Ադրբեջանի նախագահի հրահանգով ապօրինի ձերբակալվողների շարքում: Արցախի նախկին արտգործնախարար Դ. Բաբայանը ադրբեջանական կողմին Շուշիում հանձնվելուց առաջ ֆեյսբուքյան իր էջում թողած գրառման մեջ նշել էր, որ իր չներկայանալը Արցախի բազմաչարչար ժողովրդին լուրջ վնաս կհասցնի[22]: Վարդանյանի ապօրինի ձերբակալությունից և Բաբայանի հանձնվելուց հետո Հակարիի կամրջի անցակետում ձերբակալվեցին Արցախի նախկին զինվորական ղեկավարները՝ պաշտպանության նախկին նախարար Լ. Մնացականյանը և նախարարի նախկին տեղակալ Դ. Մանուկյանը:

Ռուս խաղաղապահների միջնորդությամբ ադրբեջանական կողմի հետ ձեռք բերված պայմանավորվածություններից ելնելով՝ Արցախի իշխանությունները կատարում էին հրադադարը պահպանելու, ինչպես նաև Պաշտպանության բանակի զինտեխնիկան և զենք-զինամթերքը ռուս խաղաղապահներին փոխանցելու պարտավորությունները, սակայն վերահսկողություն Բաքվի պահանջը վճռականորեն մերժվեց արցախցիների կողմից՝ հանգեցնելով հայրենի օջախներից հեռանալու դժվարին որոշման կայացմանը:

Դրանից հետո տեղի ունեցավ Արցախի նախկին երեք նախագահների՝ Ա. Ղուկասյանի, Բ. Սահակյանի, Ա. Հարությունյանի և ԱԺ նախագահ Դ. Իշխանյանի հանձնվելը ադրբեջանական կողմին: Ռազմական գործո-

[21] Տե՛ս Բաքուն պատրաստ է խոսել Արցախի հետ, բայց առանց Ռուբեն Վարդանյանի, https://www.hetq.am/hy/article/15337

[22] Տե՛ս Ինչու՞մ է մեղադրում Բաքուն Արցախի քաղաքական և ռազմական գործիչներին, https://www.hetq.am/hy/article/161253

ղությունների ավարտից հետո Արցախի ղեկավարների ապօրինաբար ձերբակալվելու փաստը նույնպես հաստատում է, որ տվյալ դեպքում կիրառելի են ոչ թե 1949 թ. Ժնևյան կոնվենցիաների, այլ «Պատանդառության դեմ միջազգային կոնվենցիայի» դրույթները (հոդված 12)[23]:

Արցախի երեք նախկին նախագահների և ԱԺ նախագահի ապօրինի ձերբակալությունից հետո Արցախի նախագահ Ս. Շահրամանյանը, պաշտպանության նախարարի և երկու թիկնապահների հետ, Հայաստան է անցել ոչ թե Հակարիի կամրջի անցակետով, այլ ուղղաթիռով է տեղափոխվել Սիսիան: Փոխադրումը կատարվել է ուղղաթիռով՝ Ստեփանակերտի օդանավակայանի տարածքից, որտեղ տեղակայված էր ռուս խաղաղապահների՝ Իվանյանի հրամանատարական շտաբը: Շահրամանյանն ինքը նույնպես նշում է Ադրբեջանի կողմից Արցախի ղեկավարներին ընտրողաբար պատանդառելու հանգամանքը՝ շեշտելով, որ նրանք ձերբակալվել և Բաքու են տեղափոխվել քաղաքական նպատակներով[24]:

Արցախի նախկին և գործող ղեկավարության պատանդառության միջոցով Ադրբեջանի նախագահը նպատակ է հետապնդում բարոյահոգեբանական ճնշում գործադրել հայկական կողմի վրա՝ ձգտելով «խաղաղության» շուրջ բանակցություններում միակողմանի զիջումներ կորզել Արցախի կարգավիճակի, արցախահայության խախտված իրավունքների վերականգնման, հարցերը բանակցային սեղանից ու փաստաթղթի նախագծից դուրս թողնելու, ինչպես նաև Մեղրիի տարածքով Նախիջևանի հետ արտատարածքային հաղորդակցություն՝ այսպես կոչված «Զանգեզուրի միջանցք» ստանալու հարցերում: Անհրաժեշտ է գիտակցել, սակայն, որ որևէ երաշխիք չկա, որ Ադրբեջանի պատանդառու նախագահի պայմանները կատարելուց հետո պատանդներն անվնաս ազատ կարձակվեն կամ նոր պահանջներ չեն ներկայացվի:

«Պատանդառության դեմ միջազգային կոնվենցիայում» (հոդված 13) հստակ նշված է, որ դրա դրույթները կիրառելի չեն, եթե հանցավոր արարքը կատարվել է մեկ պետության ներսում, ենթադրյալ հանցագործը՝ պատանդառուն ու նրա զոհը տվյալ պետության քաղաքացիներ են և գտնվում են տվյալ պետության տարածքում[25]: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Արցախի պատանդառված ղեկավարներից որևէ մեկը Ադրբե-

[23] Տե՛ս International Convention against the taking hostages, p. 210.
[24] Տե՛ս Սամվել Շահրամանյանը Արցախից Հայաստան է տեղափոխվել ուղղաթիռով, https://www.tert.am/am/news/2023/10/28/shahramanyan/4024101
[25] Տե՛ս International Convention against the taking hostages, p. 210.

ջանի քաղաքացի չէ, ինչը լրացուցիչ կերպով հաստատում է տվյալ դեպքի նկատմամբ ՄԱԿ-ի հիշյալ կոնվենցիայի դրույթների կիրառելի լինելը:

Անշուշտ, հնարավոր չէ ակնկալել, որ Արցախի ղեկավարներին պատանդ վերցնելու հրահանգ տված Ադրբեջանի ղեկավարն ինքնակամ կկատարի կոնվենցիայի 3-րդ հոդվածի պահանջը և պատանդների վիճակը մեղմելու կամ նրանց ազատ արձակելու միջոցներ կձեռնարկի[26]: Տվյալ պարագայում պատանդառության դեմ կոնվենցիայի դրույթների գործադրումը բարդանում է այնքանով, որքանով պատանդառուն հենց պետության ղեկավարն է, որը ներպետական շինծու մեղադրանքներով փորձում է պատանդներին ներկայացնել իբրև հանցագործներ և ահաբեկիչներ՝ այդ կերպ ձգտելով չեզոքացնել Արցախի նախկին և գործող ղեկավարների պատանդառման դեպքի նկատմամբ տվյալ կոնվենցիայի դրույթների հնարավոր տարածումը: Այս դեպքը, սակայն, կարող է առաջին նախադեպային օրինակը դառնալ կոնվենցիայի լրամշակման համար: Կոնվենցիայի 16-րդ հոդվածը հնարավորություն է ընձեռում երկու կամ ավելի մասնակից պետությունների միջև տվյալ փաստաթղթի դրույթների մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ ցանկացած վեճի դեպքում նրանցից մեկի խնդրանքով հարցը ներկայացնել իրավարարության (արբիտրաժի): Եթե արբիտրաժի դիմումի օրվանից վեց ամսվա ընթացքում կողմերը չեն կարողանում համաձայնության գալ արբիտրաժի կազմակերպման հարցի շուրջ, ապա կողմերից մեկի խնդրանքով վեճը կարող է ուղարկվել ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարան[27]: Տվյալ հոդվածը Հայաստանի Հանրապետությանը հնարավորություն է տալիս Ադրբեջանի կողմից Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության պատանդառման դեպքի նկատմամբ ՄԱԿ-ի տվյալ կոնվենցիայի դրույթների կիրառման հարցով դիմել նախ միջազգային իրավարարության, իսկ Բաքվի կողմից մերժման դեպքում՝ նաև ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարան: Հիշեցման կարգով նշենք, որ, ինչպես Ադրբեջանը, այնպես էլ Հայաստանը տվյալ կոնվենցիան ստորագրել և վավերացրել են առանց որևէ վերապահման, ինչը նշանակում է, որ երկու երկրների նկատմամբ տվյալ փաստաթուղթը գործում է ամբողջությամբ:

Հասկանալի է, որ այս դատական գործընթացները ժամանակատար են, և երաշխիք չկա, որ դատարանը տվյալ դեպքի նկատմամբ կոնվենցիայի դրույթների կիրառությունն ամբողջովին Արցախի պատանդառված ղեկավարների օգտին կմեկնաբանի: Նման միջազգային իրավական գոր-

[26] Տե՛ս նույն տեղում, էջ 207:
[27] Տե՛ս նույն տեղում, էջ 210:

ծընթացի նախաձեռնումը, սակայն, նախ ամբողջ աշխարհի ուշադրությունը կսևեռի Բաքվի բանտում ապօրինաբար պահվող Արցախի ղեկավարների վրա և կուժեղացնի այդ հարցով Ադրբեջանի նկատմամբ միջազգային հանրության ճնշումը, ինչպես նաև լուրջ հարված կհասցնի Ադրբեջանի միջազգային հեղինակությանը՝ տվյալ երկիրն ու մասնավորապես նրա նախագահին ի ցույց դնելով որպես պատանդառու հանցագործի: Այս առումով կարևոր քայլ պետք է համարել այն, որ Արցախի ղեկավարներին ապօրինաբար ձերբակալելուց հետո համաշխարհային ավելի քան 150 գործիչներ, այդ թվում՝ պետությունների նախկին ղեկավարներ, Նոբելյան մրցանակակիրներ, բիզնեսի ու մարդասիրական ոլորտի առաջնորդներ Ադրբեջանից պահանջեցին անհապաղ և անվերապահ ազատ արձակել «հայ բանտարկյալներին»[28]:

Ադրբեջանի նախագահի կողմից քաղաքական նպատակներով Արցախի ռազամաքաղաքական ղեկավարների առևանգումն ու Բաքվի բանտում պատանդի կարգավիճակով ապօրինի պահելը միանգամայն նույնականանում է Հայոց ցեղասպանության ընթացքում երիտթուրքերի կառավարության կողմից նախապես կազմված ցուցակներով հայ մտավորականությանը ձերբակալելու և հետագայում աքսորի ճանապարհին ֆիզիկապես վերացնելու գործելաոճի հետ: Ադրբեջանի այս ապօրինի գործողություններն Արցախի Հանրապետության ինքնորոշման իրավունքի ոտնահարման դրսևորումներ են:

Եզրակացություններ և առաջարկներ

Նման դատական գործի նախաձեռնումն, անշուշտ, պետք է ապահովագրված լինի դրան նախորդող և դրան զուգահեռ ընթացող Ադրբեջանի դեմ քաղաքական և քարոզչական-տեղեկատվական գործընթացով, ինչը կարող է նպաստել ՄՔԴ-ում վարույթի օբյեկտիվ ընթացքին և համապատասխան որոշման կայացմանը: Իհարկե, ՄՔԴ որոշումները կյանքի կոչելու ոչ այդքան հաջող պրակտիկան որոշակի կասկածների տեղիք է տալիս, սակայն այս գործընթացի հաջողությունը զգալիորեն կզսպի Ադրբեջանի և նրա թիկունքում գործող Թուրքիայի ագրեսիվ կեցվածքը և միջազգային իրավական հիմքեր կնախապատրաստի Արցախի ու արցախահայերի իրավունքների հետագա պաշտպանության համար:

[28] Over 150 global humanitarian, business and political leaders demand freedom of "Armenian Prisoners", https://armenianweekly.com/2023/12/13/over-150-global-humanitarian-business-and-political-leaders-demand-freedom-of-armenian-prisoners/

Թեև Ադրբեջանի վրա միջազգային ճնշումներն աստիճանաբար մեծանում են, սակայն դրանք դեռևս բավարար չեն Արցախի բնակչության խախտված իրավունքները վերականգնելու և Ադրբեջանի իրագործած հանցագործությունների համար այդ երկրի ռազմաքաղաքական ղեկավարությանը պատասխանատվության կանչելու համար: Ադրբեջանի վրա ճնշումը մեծացնելու նպատակով՝

1. պետք է նախաձեռնվի ՄԱԿ-ի անկողմնակալ առաքելության ժամանումը Հայաստան, որպեսզի դրանում ընդգրկված տարբեր երկրների ներկայացուցիչները հնարավորություն ունենան շփվել բռնի տեղահանված արցախցիների հետ և օբյեկտիվ տեղեկատվություն ստանան Արցախի շրջափակման, 2023 թ. սեպտեմբերի 19-ի ագրեսիայի և բռնագաղթի մասին: Այս տեղեկատվության հիման վրա պատրաստված անաչառ զեկույցն արժանի հակահարված կլինի Ադրբեջանի բարեկամ երկրների կողմից հայաթափված Արցախ ժամանելուց հետո տարածված կեղծ և շինծու զեկույցներին:

2. Արցախի իշխանությունների կողմից պետք է նախաձեռնվի «Չներկայացված ազգերի և ժողովուրդների կազմակերպությանը» (այսուհետ՝ ՉԱԺԿ) Unrepresented Nations and Peoples Organization (UNPO) անդամակցելու գործընթաց՝ միջազգային այդ հարթակն օգտագործելով արցախահայության խախտված իրավունքների մասին բարձրաձայնելու և դրանց արդյունավետ պաշտպանությանը հասնելու նպատակով: Հատկանշական է, որ անգամ կառույցին Արցախի Հանրապետության չանդամակցելու պարագայում ՉԱԺԿ-ը 44-օրյա պատերազմի ընթացքում՝ 2020 թ. հոկտեմբերի 20-ին հրապարակեց զեկույց, որում արձանագրվեց, որ 2020 թ. սեպտեմբերի 27-ից Լեռնային Ղարաբաղում/Արցախի Հանրապետությունում սկսված ռազմական գործողությունները հանգեցրել են հազարավոր մարդկանց՝ հիմնականում կանանց և երեխաների տեղահանություններին և կոչ էր արվում միջազգային հանրությանը, առաջին հերթին ԵՄ-ին՝ անհապաղ քայլեր ձեռնարկել Լեռնային Ղարաբաղի/Արցախի Հանրապետությունում քաղաքացիական անձանց կյանքը պաշտպանելու նպատակով, ապահովել միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքների կիրառությունը և պահպանել հրադադարի մասին համաձայնագրերը[29]:

3. Միջազգային կազմակերպություններում և միջազգային դատական ատյաններում հետևողական աշխատանք պետք է տարվի, որպեսզի արցախահայերի նկատմամբ Ադրբեջանի հանցագործություններն այդ կա-

[29] Տե՛ս Time to Properly Address Frozen Conflicts and Illegal Occupations in Europe, October 20, 2020, https://unpo.org/article/22100

ռույցների կողմից համարժեք քաղաքական և միջազգային իրավական գնահատականի արժանանան: Օրինակ, քայլեր կարող են ձեռնարկվել, որ ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանում ՄԱԿ-ի 1948 թ. «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի, ինչպես նաև Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության համապատասխան հոդվածների համաձայն՝ Ադրբեջանի հանցավոր քաղաքականությունը որակվի որպես ցեղասպանություն և/կամ մարդկության դեմ կատարված հանցագործություն:

4. Ցեղասպանության և էթնիկ զտման, ինչպես նաև պատանդառության դեմ պայքարի համատեքստում Ադրբեջանի դեմ տարբեր դատական գործերի հարուցումը և դրանց արդյունքում միջազգային դատական ատյանների ընդունած համապատասխան որոշումները որոշակի զսպման մեխանիզմ կարող են դառնալ՝ ներկայումս վերաակտիվացող համաթուրանական ծրագրի հաջորդ փուլի՝ «Արևմտյան Ադրբեջան» զառանցանքը կյանքի կոչելու ճանապարհին:

Արմեն Ց. Մարուքյան – 60-ից ավելի գիտական հոդվածների, հայերեն, ռուսերեն և անգլերեն 10 գրքերի հեղինակ և փաստաթղթերի 4 ժողովածուների կազմող է: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության հարցերը և Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրները:

Էլ. հասցե՝ mararmts@yahoo.com

Summary

MANIFESTATIONS OF AZERBAIJAN'S GENOCIDAL POLICY

After the 44-day war of 2020

Armen Ts. Marukyan

Doctor of Sciences in History

Key words - Republic of Artsakh, Republic of Armenia, Azerbaijan, war, aggression, blockade, de-Armenization, military-political leadership, taking hostages.

The 44-day war of 2020 had serious consequences for the republics of Artsakh and Armenia. In addition to serious human and territorial losses, security threats and existential challenges for the population of the two Armenian republics have

increased significantly. As expected, Azerbaijan was not satisfied with the results of the 2020 war, which are reflected in the text of the tripartite declaration of November 9, trying to fully develop the successes achieved with the direct participation and full support of Turkey. The aggressiveness of Azerbaijan's policy towards the Armenian republics not only did not decrease, but received new manifestations, turning into a multi-vector hybrid war that led to the de-Armenization of Artsakh.

After a 10-month blockade, on September 19, 2023, initiating another aggression against Artsakh, along with the mass deportation of the Armenian population, on the orders of the President of Azerbaijan, representatives of the military-political leadership of the Nagorno-Karabakh Republic were captured and are still being illegally held hostage. With these illegal actions, the President of Azerbaijan seeks to exert moral and psychological pressure on the Armenian side, seeking from the latter both the renunciation of any demands on the status of Artsakh, the restoration of the violated rights of Artsakh Armenians, and unilateral concessions in the process of delimitation and demarcation of the Armenian-Azerbaijani border, as well as receiving extraterritorial communication (the so-called "Zangezur corridor") with Nakhichevan through the territory of Meghri.

From the point of view of international law, Armenia has the opportunity, based on the provisions of the UN International Convention "Against the Taking of Hostages" of December 17, 1979, in international courts to initiate an international legal process against Azerbaijan, which is also a party to this convention. Of course, legal proceedings can last a long time, and there is no final guarantee that the courts will exclusively interpret the provisions of this convention in favor of the Artsakh leaders who have become hostages. There is no doubt, however, that the initiation of such a process will increase international pressure on Azerbaijan regarding the release of Artsakh leaders illegally held in a Baku prison, will cast doubt on the international image of this country and will present its president as a criminal who has taken hostages.

Резюме

ПРОЯВЛЕНИЯ ГЕНОЦИДАЛЬНОЙ ПОЛИТИКИ АЗЕРБАЙДЖАНА

После 44-дневной войны 2020 года

Армен Ц. Марукян

Доктор исторических наук

Ключевые слова – Республика Арцах, Республика Армения, Азербайджан, война, агрессия, блокада, деарменизация, военно-политическое руководство, захват заложников.

44-дневная война 2020 г. имела серьезные последствия для республик Арцаха и Армении. Помимо серьезных человеческих и территориальных потерь, существенно возросли угрозы безопасности и экзистенциональные вызовы для населения двух армянских республик. Как и предполагалось, Азербайджан пытаясь всемерно развить успехи, достигнутые при непосредственном участии и всесторонней поддержке Турции, не удовлетворился итогами войны 2020 г., которые отражены в тексте трехсторонней декларации от 9 ноября,. Агрессивность политики Азербайджана по отношению к армянским республикам не только не уменьшилась, но и стала проявляться по-новому, превратившись в многовекторную гибридную войну, приведшую к деарменизации Арцаха.

После 10-месячной блокады 19 сентября 2023 г. инициировав очередную агрессию против Арцаха, наряду с массовой депортацией армянского населения по приказу президента Азербайджана были захвачены и до сих пор незаконно удерживаются в заложниках представители военно-политического руководства Нагорно-Карабахской Республики. Этими противоправными действиями президент Азербайджана стремится оказать моральное и психологическое давление на армянскую сторону, добиваясь от последней как отказа от каких-либо требований по вопросам статуса Арцаха, восстановления нарушенных прав арцахских армян, так и односторонних уступок в процессе делимитации и демаркации армяно-азербайджанской границы, а также получении экстерриториального сообщения (так называемого «Зангезурского коридора») с Нахичеванью через территорию Мегри.

С точки зрения международного права Армения имеет возможность на основании положений международной конвенции ООН «Против захвата заложников» от 17 декабря 1979 г. в международных судебных инстанциях инициировать международно-правовой процесс против Азербайджана, который также является участником данной конвенции. Конечно, судебные процессы могут длиться долго, и нет гарантии, что судебные инстанции положения данной кон-

венции будут толковать исключительно в пользу ставших заложниками лидеров Арцаха. Несомненно, однако, что инициирование такого процесса усилит международное давление на Азербайджан в вопросе освобождения лидеров Арцаха, незаконно содержащихся в бакинской тюрьме, поставит под сомнение международный имидж данной страны и представит ее президента как преступника, захватившего заложников.

Օգտագործված գրականություն

1. Ադրբեջանը հրապարակել է սեպտեմբերի 19-ի հարձակման հետևանքով զոհերի թիվը, https://www.tert.am/am/news/2023/09/27/azerbaijan/4008682
2. Բանակցություններ Եվլախում. Ինչ պայմանավորվածություններ են ձեռք բերվել ըստ ադրբեջանական կողմի, https://hetq.am/hy/article/160361
3. Բաքուն պատրաստ է խոսել Արցախի հետ, բայց առանց Ռուբեն Վարդանյանի, https://www.hetq.am/hy/article/15337
4. **Բեգլարյան Ա.,** Ադրբեջանը վերահսկողության տակ է վերցրել նաև Արցախի որոշ համայնքներ,https://arm.sputniknews.ru/20230920/adrbejany-verahskvoghutjan-tak-e-vercrel-naev-arcakhi-vorvosh-hamajnqner-beglarjan-66148610.html
5. Ինչում է մեղադրում Բաքուն Արցախի քաղաքական և ռազմական գործիչներին, https://www.hetq.am/hy/article/161253
6. Սամվել Շահրամանյանը Արցախից Հայաստան է տեղափոխվել ուղղաթիռով, https://www.tert.am/am/news/2023/10/28/shahramanyan/4024101
7. Քանի քաղաքացի է ԼՂՀ-ից մտել Հայաստան վերջին տվյալներով, https://hraparak.am/post/861cf8e364f9ab1950b2221ab59142f3
8. **Amatuni Z.,** International Committee of the Red Cross, UNHR Interview in Yerevan, March 21, 2023.
9. Application of the International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination (Armenia v. Azerbaijan) (Order on Provisional Measures) February 22, 2023.
10. **Avetisyan A.,** Weaponizing Energy: Nagorno-Karabakh's Energy Supplies Under Siege. EVN Report, 2023, https://evnreport.com/spotlight-karabakh/weaponizing-energy-nagorno-karabakhs-energy-supplies-under-siege/.
11. Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (adopted December 9, 1948) 78 UNTS 277 (Genocide Convention)
12. Former International Criminal Court prosecutor, Luis Moreno Ocampo, issued report stating the blockade of Nagorno-Karabakh is «Genocide». Center for Truth and Justice, 2023, https://www.cftjustice.org/former-international-criminal-court-prosecutor-luis-moreno-ocampo-issued-report-stating-the-blockade-of-nagorno-karabakh-is-genocide/
13. Human Rights Defender of the Republic of Artsakh. 2023. "Interim Report on Violations of the Rights of Artsakh People by Azerbaijan in February - March." artsakhombuds.am. https://artsakhombuds.am/en/document/910
14. Human Rights Defender of the Republic of Artsakh. «Report on the Violations of Individual and Collective Human Rights as a Result of Azerbaijan's Blockade of Artsakh (Nagorno-Karabakh) (100 Days)». Artsakh Ombudsman, 2023, https://artsakhombuds.am/en/document/1028
15. International Convention against the taking hostages. Adopted by the General Assembly of the United Nations on 17 December 1979, United Nations – Treaty Series, 1983.
16. International Court of Justice, "Summary of the Order of 22 February 2023", https://www.icj-cij.org/node/202558

17. International Criminal Court (ICC), Elements of Crimes, Footnote 12, 2013, The Hague, https://www.icc-cpi.int/sites/default/files/Publications/Elements-of-Crimes.pdf
18. **Ocampo L. M.,** Current genocides and the consistent international practice to deny them. Summary of the case of Nagorno-Karabakh, REPORT-USP-Innovation-on-Global-Order.-Nagorno-Karabakh-case%20(1).pdf
19. Over 150 global humanitarian, business and political leaders demand freedom of "Armenian Prisoners",https://armenianweekly.com/2023/12/13/over-150-global-humanitarian-business-and-political-leaders-demand-freedom-of-armenian-prisoners/
20. Time to Properly Address Frozen Conflicts and Illegal Occupations in Europe, October 20, 2020, https://unpo.org/article/22100
21. Заявление президента Азербайджана, премьер-министра Армении и президента России 10 ноября 2020 года, http://kremlin.ru/events/president/news/64384

REFERENCES

1. Adrbejane hraparakel e septemberi 19-i hardzakman hetevanqov zoheri tive', https://www.tert.am/am/news/2023/09/27/azerbaijan/4008682 **(In Armenian)**
2. Banaktsutyunner Evlakhum. inch paymanavorvatsutyunner en dzerq bervel e st adrbejanakan koghmi, https://hetq.am/hy/article/160361 **(In Armenian)**
3. Baqun patrast e khosel Artsakhi het, bayts aranc Ruben Vardanyani, https://www.hetq.am/hy/article/15337 **(In Armenian)**
4. **Beglaryan A.,** Adrbejany verahskoghutyan tak e vertsrel naev Artskhi vorosh hamaynqner, https://arm.sputniknews.ru/20230920/adrbejany-verahskvoghutjan-tak-e-vercrel-naev-arcakhi-vorvosh-hamajnqner-beglarjan-66148610.html **(In Armenian)**
5. Inchum e meghadrum Baqun Artsakhi qaghaqakan ev razmakan gortsichnerin, https://www.hetq.am/hy/article/161253 **(In Armenian)**
6. Qani qaghaqatsi e LGH-its mtel Hayastan verjin tvyalnerov, https://hraparak.am/post/861cf8e364f9ab1950b2221ab59142f3 **(In Armenian)**
7. Samvel Shahramanyane' Artsakhits Hayastan e teghspokhvel ughghatirov, https://www.tert.am/am/news/2023/10/28/shahramanyan/4024101 **(In Armenian)**
8. Zayavlenie prezidenta Azerbayjana, premier-ministra Armenii I prezidenta Rossii 10 noyabrya 2020 goda, http://kremlin.ru/events/president/news/64384 **(In Russian)**.